ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/66-2>>

ք. Երևան «02 » օգոստոսի 2019 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԱՐՀՈՎՇԻՆ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Գրիգորյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Շիրակի 16,18 շենքերի բակային տարածքի բարեկարգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո **և կատարման ժամկետը է սահմանվում է՝ 2019թ սեպտեմբերի 30-ը:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օր**: Եթե երաշխիքային

ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **23599200 (քսաներեք միլիոն հինգ հարյուր իննսունինը հազար երկու հարյուր)** ՀՀ դրամ, որից **3933200 (երեք միլիոն ինը հարյուր երեսուներեք հազար երկու հարյուր)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և

արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսնված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կապալառու**
Երևանի քաղաքապետարան	«Արհովշին» ՍՊԸ
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1	Ք. Երևան, Արշակունյանց պող. 48/2 շենք բն. 3
Կենտրոնական գանձապետարան	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900022750500	Հ/Հ 1150007143333380
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 00110978
Է. Կիրակոսյան _____	Ա. Գրիգորյան _____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
«02» օգոստոսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/66-2>> գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Շիրակի 16,18 շենքերի բակային տարածքի բարեկարգում

<<	Հիմնավորումը	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ.դր./	Ընդհանուր արժեքը հազ.դր
1	2	3	4	5		
		Քանդման աշխատանքներ				
1	27-36	Բետոնե եզրաքարերի քանդում	զմ	175.0000	1.1730	205.2750
2	Е46-99	Բետոնե գոտու քանդում	մ3	3.2000	10.4040	33.2928
3	Е9-122 q=0,6, q=0,7	Եզրային ճաղաշարի քանդում h=0,9մ, h=0,7մ	տ	2.3000	75.0680	172.6564
4	16-45 q=0,6	Նստարանների քանդում	հատ	4.0000	2.0590	8.2360
5	16-45 q=0,6	Նստարանների քանդում/հանձնում պատվիրատուին/	հատ	2.0000	2.0590	4.1180
6	Е9-122 q=0,6, q=0,7	Զրուցատաղավարի ապամոնտաժում	տ	0.3500	75.0680	26.2738
7	Վ12-462	Գոյություն ունեցող ցայտաղբյուրի ապամոնտաժում	հատ	1.0000	47.7920	47.7920
8	Վ17-129	Գոյություն ունեցող ֆուտբոլի դարպասի ապամոնտաժում	կգ	90.0000	0.0850	7.6500
9	Վ19-2-Բ	Չգործող մետաղական խողովակների ապամոնտաժում Ø57-108մմ	զմ	75.0000	0.6170	46.2750
10	Е27-175 q=0,6	Տոմետի քանդում	մ2	10.0000	0.5580	5.5800
11	23-139	Հին բետոնե աստիճանների քանդում	մ3	0.1800	11.0170	1.9831
12	9-34 q=0,3	Էլեկտրակայանի կողքի ցանկապատի քանդում	մ2	28.0000	1.6500	46.2000
13	С310-13 ї.Ù.Ï	Շին աղբի բարձում և տեղափոխում 13կմ	տն	52.0000	2.4010	124.8520
14	27-33	Ասֆալտի ծածկույթի քանդում	մ3	4.0000	3.6960	14.7840

15	E27-33	Ասֆալտի ծածկույթի քանդում փողոցի հատվածում h=8սմ/400*0.08/	մ3	30.0000	1.6050	48.1500
16	E27-35	Ասֆալտի ծածկույթի քանդում տարածքում h=3սմ խորությամբ	մ2	690.0000	0.0580	40.0200
		Հողային աշխատանքներ և բարեկարգում				0.0000
1	E1-962	4-րդ կարգի գրունտի փորում ձեռքով խրամուղում բետոնե եզրաքարերի, նստարանների և աղբամանների տեղադրման համար	մ3	30.3000	3.7690	114.2007
2	E1-1136	Տարածքի հորիզոնական համահարթեցում	մ2	775.0000	0.0970	75.1750
3	27-75	Բետոնե եզրաքարերի տեղադրում 80x200մմ չափերի	գմ	408.0000	3.3340	1360.2720
4	27-78	Բետոնե եզրաքարերի տեղադրում 300x150	գմ	327.0000	5.6170	1836.7590
5	E27-176	Բետոնե ձևավոր սալերի իրականացում	մ2	358.0000	4.9170	1760.2860
6	E27-22-1	Խճի նախաշերտ 5սմ հաստությամբ սալերի տակ	մ3	35.8000	3.9410	141.0878
7	E27-19	Չոր ց/ավազե խառնուրդից շերտի պատրաստում բետոնե սալիկների տակ	մ3	35.8000	11.3030	404.6474
8	E27-173	Խճի շերտ փռում 5սմ հաստությամբ տոփանումով ասֆալտե շերտի տակ	մ2	289.0000	0.5340	154.3260
9	E27-164 27-165	Ասֆալտբետոնե ծածկույթի պատրաստում 5սմ հաստությամբ/եզրաքարերի կողքի հատված	մ²	289.0000	3.6420	1052.5380
11	E27-19	Կարմիր ավազ խաղահրապարակի համար	մ3	14.4000	2.0460	29.4624
12	11-215	Ցայտաղբյուրի կողքի հարթակի երեսապատում բազալտե 30մմ հաստության սալերով	մ2	8.5000	9.7210	82.6285
13	Վ13-29	Ցայտաղբյուրների և բազալտե հարթակների հղկում	մ2	10.7000	6.7800	72.5460
14	15-300 15-304	Էլեկտրակայանի կողքի սյուների ց/ավազ սվաղ ցանցով	մ2	9.6000	3.5210	33.8016
16	E1-1592	Սեվաղողի մշակում էքսկավատորով ինքնաթափ մեքենայի վրա բարձելով	մ3	60.0000	0.4530	27.1800
17	C310-13	Սեվահողի տեղափոխում 13կմ /y=1,3տ/մ3/	տն	78.0000	2.4000	187.2000
18	48-161	Բուսական հողի շերտի փռում h=10սմ	մ3	60.0000	2.3700	142.2000
15	E48-214	Ճիմապատում	մ2	1020.0000	1.0670	1088.3400
		Նստարանների իրականացում /22 հատ/				0.0000
1	E9-247	Նստարանի մետաղական հիմնակմախքի իրականացում ուղղանկյուն խողովակից և տաշտաձև հեծանից	տ	0.6200	191.6140	118.8007
2	Ինֆ. Տեղեկագիր	Խողովակ □50x50x3	գծմ	65.0000	1.9270	125.2550

3	Ինֆ. Տեղեկագիր	Պողպատե թիթեղ 5մմ հաստության	մ2	5.3000	17.4560	92.5168
4	Ինֆ. Տեղեկագիր	Պողպատե տաշտաձև հեծան N10, L=0,5մ	գծմ	22.0000	3.7970	83.5340
5	8-300	Նստարանների վրա տեղադրվող փայտե չորսուներ	մ3	1.5000	193.7250	290.5875
6	Վ14-285	Տախտակի լաքապատում	մ2	55.0000	0.5700	31.3500
7	Ե27-42	Խճի շերտի իրականացում 70մմ հաստության տոփանումով	մ^2	44.0000	0.9930	43.6920
8	Ե6-2	Հիմքերի բետոնացում B15 դասի բետոնով նստարանների համար	մ3	6.2000	48.9230	303.3226
9	Ե15-614	Մետաղե էլեմենտների մակերևույթների յուղաներկում	մ2	17.6000	1.0680	18.7968
	-	***Աղբամանի տեղադրում/15 հատ/***				0.0000
1	Ե9-247	Մետաղական աղբամանի իրականացում	տ	0.3600	191.2250	68.8410
2	Ինֆ. Տեղեկագիր	Պողպատյա խողովակ 50x25x2մմ	գմ	30.0000	0.9070	27.2100
3	Ինֆ. Տեղեկագիր	Պողպատե թիթեղ 2մմ հաստության	մ2	13.9500	5.9050	82.3748
4	Ինֆ. Տեղեկագիր	Պողպատե տաշտաձև հեծան N10, L=0,5մ	գծմ	7.5000	3.7970	28.4775
5	Ե6-2	Հիմքերի բետոնացում B15 դասի բետոնով աղբամանների համար	մ3	0.7500	48.9200	36.6900
6	Ե27-42	Խճի շերտի իրականացում 70մմ հաստության տոփանումով	մ^2	8.6000	0.9330	8.0238
7	Ե15-614	Մետաղե էլեմենտների մակերևույթների յուղաներկում	մ2	12.0000	1.0680	12.8160
8	Շուկա	Ցայտաղբյուրի տեղադրում	հատ	1.0000	136.0200	136.0200
		Խաղեր				0.0000
1	малые архитектурные формы ст.217 вып.1	Սղարանի տեղադրում	հատ	1.0000	188.3890	188.3890
2	малые архитектурные формы ст.217 вып.1	Ճոճանակի տեղադրում	հատ	1.0000	148.7170	148.7170
3	малые архитектурные формы ст.217 вып.1	Կառուսելի տեղադրում	հատ	1.0000	290.4020	290.4020
4	малые архитектурные формы ст.217 вып.1	Հորիզոնական ճոճանակի տեղադրում	հատ	1.0000	29.7020	29.7020
5	6-2-3 1-9	Կետային հիմքերի իրականացում B 15 դասի բետոնով	մ3	1.5000	39.7720	59.6580
		Զրուցատաղավարի պատրաստում/2 հատ/				0.0000
1	Ե1-1132	Շինարարության հատկացված տարածքի հարթեցում ձեռքով (3-րդ կարգի գրունտ)	մ^2	20.0000	0.1360	2.7200
2	Ե1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով հիմքերի տակ	մ^3	3.8000	3.7690	14.3222
3	11-2	Բնահողի տոփանում խճով խտացում պնևմոխտացուցիչներով	մ^2	15.0000	0.2110	3.1650

4	E6-21	Խամքարաբետոնե հիմքերի պատրաստում B7,5 դասի բետոնից	մ3	1,2400	30.6780	38.0407
5	E6-1	B15 դասի բետոնից կետային հիմքերի պատրաստում	մ³	4,4000	35.9690	158.2636
6	C310-13 տ.մ.կ. 29	Ավելորդ հողի բարձում և տեղափոխում 13կմ	տն	10,0000	3.1770	31.7700
7	E6-83	Ներդիր էլեմենտներ 150x150x5մմ	տն	0,0283	652.6880	18.4711
8	E9-94	60x60x3,5մմ քառակուսի խողովակներից կանգնակների մոնտաժ	տն	0,2820	514.5780	145.1110
9	9-94	60x80x3,5մմ ուղղանկյուն խողովակներից հեծանի մոնտաժ	տն	0,1580	532.7140	84.1688
10	i25-16	Անկյունակի մոնտաժ L 50x5	տն	0,0082	467.0250	3.8296
11	9-94	40x40x2մմ քառակուսի խողովակներից տանիքային մասի մոնտաժ	տն	0,0730	514.5780	37.5642
12	9-94	20x20x2մմ քառակուսի խողովակներից կավարամածի մոնտաժ	տն	0,0770	108.7480	8.3736
13	9-46	20x20x2մմ քառակուսի խողովակներից բազրիքների և ճաղաշարի մոնտաժ	տն	0,1240	605.7950	75.1186
14	9-46	40x20x2,0մմ ուղղանկյուն խողովակներից բազրիքի պատրաստում	տն	0.0340	503.7820	17.1286
15	E12-404	Տանիքի ծածկույթի պատրատում ցինկապատ պրոֆիլավոր թիթեղից d=0.55մմ հաստությամբ	մ²	24.0000	4.6920	112.6080
16	9-123	Մետաղական նստարանի տեղադրում	տն	0,1600	523.2490	83.7198
17	9-123	Մետաղական սեղանի տեղադրում	տն	0,1370	523.2490	71.6851
18	8-300	Նստարանների վրա տեղադրվող փայտե չորսուներ	մ3	0,0800	193.7250	15.4980
19	15-614	Մետաղական մասերի յուղաներկում/այդ թվում սեղան և նստարան/	մ2	54,0000	1.0670	57.6180
20	34-316	Կախովի առաստաղ ՊՎՔ պրոֆիլներից	մ2	22,2000	7.0050	155.5110
		<u>Մետաղական ճաղաշարի, բազրիքի իրականացում</u>				0.0000
1	E1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով հիմքերի տակ	մ³	5,7200	3.7690	21.5587
2	25-17	Մետաղական ցանկապատի իրականացում	տն	1,6110	73.1320	117.8157
3	Ինֆ.տեղեկագիր	Ցանկապատի կանգնակներ 60x40x2մմ	գմ	135,2000	1.2470	168.5944
4	Ինֆ.տեղեկագիր	Պողպատե խողովակ 40x40x2մմ	գմ	193,0000	1.0020	193.3860
5	Ինֆ.տեղեկագիր	Պողպատե ուղղանկյուն խողովակ 40x20x2մմ	գմ	589,0000	0.7610	448.2290
6	6-83	Ներդիր էլեմենտ 250x250x8մմ	տն	0,2440	641.3530	156.4901
7	E15-614	Մետաղական ցանկապատի յուղաներկում 2 անգամ	մ2	129,0000	1.0670	137.6430
8	27-22-1	Բնահողի տոփանում խճով	մ3	0,4200	5.8110	2.4406
9	6-2-3 | 1-9	Կետային հիմքերի իրականացում B 12,5 դասի բետոնից	մ3	1,7000	37,7140	64.1138

		Մարզադաշտի ցանկապատի իրականացում H=3մ				0.0000
1	E1-962	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով հիմքերի տակ	մ³	8.1200	3.7690	30.6043
2	6-2-3 1-9	Մանրահատ բետոնի իրականացում B 7,5 դասի	մ3	0.0280	34.0720	0.9540
3	6-2-3 1-9	Կետային հիմքերի իրականացում B 10 դասի բետոնից	մ3	1.0080	34.0720	34.3446
4	E6-2	Կանգնակների հիմքերի բետոնացում B15 դասի բետոնով	մ3	7.0560	39.8520	281.1957
5	7-320 21-12	Մետաղական ցանկապատ	մ	50.4000	5.2550	264.8520
6	Ինֆ.տեղեկ	Անկյունակ 40x40x3ՍՍ	գմ	504.0000	1.0770	542.8080
7	Ինֆ.տեղեկ	Ցանկապատի կանգնակներ Φ89x3մմ	գմ	104.0000	2.7660	287.6640
8	Ինֆ.տեղեկ	Պողպատյա խողովակ Φ102x3մմ	գմ	19.6000	3.0940	60.6424
9	E9-24 կիրարկում	Ցանկապատի ցանց Φ=3մմ բջիջը 40x40մմ	մ2	168.0000	1.2360	207.6480
10	Ինֆ.տեղեկ	Պողպատե ուղղանկյուն խողովակ 40x40x4մմ	գմ	16.8000	1.8140	30.4752
11	6-83	Պողպատե թերթ 150x150x10մմ	տն	0.0500	652.6880	32.6344
12	E15-614	Մետաղական ցանկապատի յուղաներկում 2 անգամ	մ2	326.0000	1.0670	347.8420
13	Ինֆ.տեղեկ	6AI ամրան	տն	0.1120	367.6780	41.1799
14	16-36	Ֆուտբոլի դարպասի վերատեղադրում	հատ	2.0000	4.7480	9.4960
		Բասկետբոլի վահանի տեղադրում				0.0000
1	E1-962	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով հիմքերի տակ	մ³	1.0400	3.7690	3.9198
2	6-2-3 1-9	Մանրահատ բետոնի իրականացում B 7,5 դասի	մ3	0.0020	34.0720	0.0681
3	6-2-3 1-9	Կետային հիմքերի իրականացում B 12,5 դասի բետոնից	մ3	0.1300	37.7140	4.9028
4	E6-2	Կանգնակների հիմքերի բետոնացում B15 դասի բետոնով	մ3	0.9000	39.8520	35.8668
5	Ինֆ.տեղեկ	Պողպատե խողովակ 100x100x4մմ	գմ	6.0000	4.1260	24.7560
6	Ինֆ.տեղեկ	Պողպատե ուղղանկյուն խողովակ 80x100x4ՍՍ	գմ	1.4000	3.7740	5.2836
7	Ինֆ.տեղեկ	Անկյունակ 40x40x4մմ	գմ	11.4000	1.0810	12.3234
8	Ինֆ.տեղեկ	Անկյունակ 50x50x4մմ	գմ	7.2000	1.7000	12.2400
9	Ինֆ.տեղեկ	Պողպատե խողովակ Φ133մմ/պատյան/	գմ	1.6000	5.4070	8.6512
10	Շուկա	Բասկետբոլի օղակ	հատ	2.0000	5.6670	11.3340
11	Շուկա	Բասկետբոլի ցանց	հատ	2.0000	3.0150	6.0300
12	E33-82	Մետաղական խողովակների յուղաներկում	տն	0.1500	39.1130	5.8670

13	13-144	Բասկետբոլի ամրացման վահան լամինատե 15մմ հաստության 1,8x1,05մ չափերի	մ2	3.7800	11.6030	43.8593
		Ոռոգման ցանց				0.0000
		Տարածքի նախապատրաստական աշխատանքներ				0.0000
1	27-33	Ասֆալտի ծածկույթի քանդում	մ3	1.0000	3.6960	3.6960
2	Е1-962	Բնահողի քանդում ձեռքով խրամուղիներում	մ3	24.0000	3.7690	90.4560
3	Е23-1	Ավազե նախապատրաստական շերտի իրականացում	մ3	7.0000	4.2230	29.5610
4	Е22-117	Ф40մմ Պոլիէթիլենե խողովակաշարի մոնտաժ խրամուղում փորձարկումով	գմ	150.0000	0.7420	111.3000
5	22-383	Գնդիկավոր փականի dy=40	հատ	1.0000	5.7990	5.7990
6	22-365	Պոլիէթիլենե ձևավոր մասեր	հատ	10.0000	1.5860	15.8600
7	22-365	Կարճախողովակ Ф20 գնդիկավոր փականով dy=15; L=300մմ	հատ	2.0000	2.9610	5.9220
8	Е16-165	Ավտոմատ ստացիոնար ոռոգիչ ф15	հատ	4.0000	8.3980	33.5920
9	Е16-62	Պողպատյա պատյանի տեղադրում Ф80; L=22մ	մ	10.0000	5.7880	57.8800
10	15-617	Պողպատե խողովակների հակակոռոզիոն մեկուսացում	մ	20.0000	1.8850	37.7000
11	Е27-19 7-1	Պաշտպանիչ շերտ տեղի փափուկ հողով	մ3	5.1000	0.6960	3.5496
12	22-399	Միացում գործող ցանցին	տեղ	1.0000	9.7080	9.7080
13	22-312	Ցանցի փորձարկում	գմ	190.0000	0.0630	11.9700
14	1-970	Խրամուղու ետլիցք	մ3	12.0000	1.2900	15.4800
15	Е27-43 Е27-43-1	Ա/բ ծածկի տակ խճի նախապատրաստական շերտի իրականացում 17սմ հաստությամբ	մ2	10.0000	1.5120	15.1200
16	Е27-164а	Ա/բ խոշորահատիկ ծածկույթի իրականացում h=4սմ	մ2	10.0000	2.5510	25.5100
17	Е27-164b	Ա/բ մանրահատիկ ծածկույթի իրականացում h=4սմ	մ2	10.0000	3.7180	37.1800
18	С310-15	Ավելորդ հողի տեղափոխում	տն	5.0000	2.4000	12.0000
		Արտաքին լուսավորություն				0.0000
		Հողային աշխատանքներ				0.0000
1	Е1-961 80-4	III կարգի գրունտի քանդում ձեռքով խրամուղում	մ3	62.0000	2.1370	132.4940
2	Е1-950 79-4	IV կարգի գրունտի քանդում ձեռքով փոսորակներում	մ3	6.3000	5.5560	35.0028
3	Е27-19 7-1	Ավազե շերտի փռում հենասյան հիմքերի տակ	մ3	11.0000	2.8740	31.6140

4	Е6-84 9-8	Մինչև 20կգ միջադիր դետալների տեղադրում ծ=8մմ	տ	0.0300	757.7190	22.7316
5	Ինֆ.տեղեկագիր	Ամրան АIIIФ12	կգ	48.0000	0.3560	17.0880
6	Е6-5-4	Բետոնե հիմքերի տեղադրում հենասյուների տակ В15 մակնիշի բետոնից	մ3	5.3000	42.4840	225.1652
7	Е1-969	Եռլիցք	մ3	52.0000	3.6520	189.9040
8	С310-10 ї.Ù.Ï 29	Գրունտի և շին.աղբի բարձում և տեղափոխում 10կմ	տ	26.0000	2.7770	72.2020
		<u>Հենասյան տեղադրման և լուսավորության մոնտաժային աշխատանքներ</u>				0.0000
9	Ц8-370-3	Լուսատու արտաքին լուսավորության LED 75վտ հզորությամբ	հատ	6.0000	21.6310	129.7860
10	Ц8-370-3	Լուսատու արտաքին լուսավորության LED 15վտ հզորությամբ	հատ	12.0000	15.9630	191.5560
11	Е33-621 204-1-14	Պողպատե հենասյուների մոնտաժ Ф108х4,0 L=6,7մ	հատ	6.0000	42.5180	255.1080
12	Е33-621 204-1-14	Պողպատե հենասյուների պարկուճի մոնտաժ Ф133х4,0 L=1մ	հատ	6.0000	17.9080	107.4480
13	Е33-621 204-1-14	Պողպատյա հենասյան մոնտաժ Ф108х5,0 L=7,0մ	հատ	6.0000	41.5780	249.4680
14	Е33-621 204-1-14	Պողպատե հենասյուների մոնտաժ Ф89х4,0 L=3,5մ	հատ	6.0000	26.3550	158.1300
15	Ц8-363-2	երկեղջյուր բարձակների տեղադրում հենասյան վրա L=1,5մ ,Ф50х4	հատ	6.0000	19.4510	116.7060
16	Ц8-363-1	Միաեղջյուր բարձակների տեղադրում հենասյան վրա L=1,5մ , Ф40х3	հատ	6.0000	13.8280	82.9680
17	Ц8-363-2	Երկեղջյուր բարձակների տեղադրում հենասյան վրա L=2մ , Ф40х3	հատ	6.0000	19.4540	116.7240
18	Ц8-371-2	Բաժանման տուփ անջատիչով	հատ	12.0000	4.3140	51.7680
19	Ц8-141-1	Մալուխի մոնտաժում էլ.սևեռող մետաղաճոպանով	մ	120.0000	0.1740	20.8800
20	Ц8-141-1	Մալուխի փռում խրամուղում	մ	200.0000	0.6840	136.8000
21	Ö8-408-5	Մալուխների ճկուն ներանցիչ Ф40	հատ	12.0000	1.2240	14.6880
22	Ц8-142-1	Անկողնակի պատրաստում ավազից մեկ մալուխի համար	գմ	180.0000	0.3630	65.3400
23	Е15-613 164-7	Հենասյուների ներկում 2 անգամ	մ2	20.0000	1.1750	23.5000
24	Е33-82	Մետաղական խողովակների յուղաներկում	տն	1.2000	15.1000	18.1200
25	Ц8-417-7	Պոլիվինիլքլորիդային խողովակ Ф50	մ	170.0000	0.5250	89.2500
26	Ц8-618-1	Լուսատուների լիցքավորում	հատ	6.0000	0.7400	4.4400
27	Ц8-472-11	Լուսատուների զերոյացում	հատ	6.0000	0.9010	5.4060
28	Ц8-618-1	Լուսատուների լիցքավորում	հատ	6.0000	0.8760	5.2560

29	Ц8-472-11	Լուսատուների զերոյացում	հատ	6.0000	1.0280	6.1680
30	Ц8-618-1	Լուսատուների լիցքավորում	հատ	6.0000	0.8420	5.0520
31	Ц8-472-11	Լուսատուների զերոյացում	հատ	6.0000	0.9959	5.9754
32	Ц8-52-1	Մեկուսիչ ընկուզային	հատ	12.0000	0.8140	9.7680
33	Ц8-471-2	Լայնակ L50x50x5, L=0,6մ, m=2,3կգ	հատ	6.0000	1.1070	6.6420
34	Շուկա	Ցցիկ	հատ	12.0000	0.5670	6.8040
35	Ц8-574-56	Ժամանակի ռելե	հատ	1.0000	8.2010	8.2010
36	Ц8-471-1	Ուղղահայաց հողանցիչ պողպատե անկյունակով 50x50x5մմ L=1,5մ	հատ	6.0000	7.4190	44.5140
37	Ц8-472-2	Հորիզոնական հողանցիչ շերտապողպատից 160մմ2 կտրվածքով	մ	22.0000	0.6100	13.4200
38	Ц8-153-22	Մալուխի ծայրերի հարդարում	հատ	36.0000	1.2260	44.1360
39	Ц8-170-2	Խողովակի անցքի փակում	հատ	12.0000	0.8439	10.1268
		Ընդամենը /հազ.դր./				19666.0000
		ԱԱՀ 20%				3933.2000
		Ընդամենը /հազ.դր./				23599.2000

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900022750500
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
«Արհովշին» ՍՊԸ
Ք. Երևան, Արշակունյանց պող. 48/2 շենք բն. 3
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150007143333380
ՀՎՀՀ 00110978

Ա. Գրիգորյան ----------
(ստորագրություն)
Ա.Տ

Հավելված թիվ 2
«02 » օգոստոսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/66-2>> գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

<<Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Շիրակի 16,18 շենքերի բակային տարածքի բարեկարգման>> **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Շիրակի 16,18 շենքերի բակային տարածքի բարեկարգում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	30.09.2019թ
	ԸՆԴԱՄԵՆԸ		

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900022750500
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
«Արհովշին» ՍՊԸ
Ք. Երևան, Արշակունյանց պող. 48/2 շենք բն. 3
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150007143333380
ՀՎՀՀ 00110978

Ա. Գրիգորյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
«02 » օգոստոսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/66-2>> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<< դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում					
	45611300		օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1		Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Շիրակի 16,18 շենքերի բակային տարածքի բարեկարգում	23 599 200	23 599 200	23 599 200	23 599 200	23 599 200	23 599 200

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900022750500
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
«Արհովշին» ՍՊԸ
Ք. Երևան, Արշակունյանց պող. 48/2 շենք բն. 3
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150007143333380
ՀՎՀՀ 00110978

Ա. Գրիգորյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 4
«02» օգոստոսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/66-2>> գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«02» օգոստոսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/66-2>> գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/66-2
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «02» օգոստոսի 2019թ.

<<ԱՐՀՈՎՇԻՆ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Արամայիս Գրիգորյանի, ՆՔՀ՝ 005489737, տրված 20. 05. 2014թ. -ին 009-ի կողմից, ՀՎՀՀ՝ 1809920558, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ "ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/66» ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև /15/10/2020 (Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Կապալառու
«Արհովշին» ՍՊԸ
Ք. Երևան, Արշակունյանց պող. 48/2 շենք բն. 3
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150007143333380
ՀՎՀՀ 00110978

Ա. Գրիգորյան

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն) ՝ «Արհովշին» ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 1150007143333380

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 00110978

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Երևանի քաղաքապետարան

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900015211429

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 2359920/երկու միլիոն երեք հարյուր հիսունինը հազար ինը հարյուր քսան/

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/66-2

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ Ա. Գրիգորյան /_____/ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.S. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.S. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.